ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ՝ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ՎԱՍԻԼՅԱՆ Ս. Գ.

1991 թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ-ում տեղի ունեցավ պետական հեղաշրջման փորձ: Ծրագրված պետական հեղաշրջման փորձը ձախողվեց, և ձերբակալվեցին երկրի մի շարք ղեկավարներ՝ Ա. Լուկյանովը, Դ. Յազովը, Վ. Յանաևը, Վ. Կրյուչկովը և ուրիշներ:

Ղրիմում երեք օրվա շրջափակումից հետո Մոսկվա վերադարձավ Մ. Գորբաչովը: Հարկ է նշել, որ նա արդեն չուներ իր նախկին հեղինակությունը հասարակության լայն շրջանակներում: Երկրի կենտրոնական իշխանությունները ժամ առ ժամ կորցնում էին իրենց դերն ու ազդեցությունը: Ըստ օտարերկրյա գործակալների տվյալների՝ Մ. Գորբաչովը կորցրել էր հասարակության լայն շերտերի վստահությունը և ավելին՝ սկսել էր կորցնել իր հեղինակությունը արևմուտքի ազդեցիկ և հեղինակավոր քաղաքական գործիչների շրջանում: Այսպես, Վ. Կրյուչկովին ներկայացված ՊԱԿ-ի տեղեկանքում ասվում էր, որ Բուշի մերձավոր շրջապատում ենթադրում են, որ Մ. Գորբաչովը, որպես ԽՍՀՄ քաղաքական առաջնորդ, սպառել է իրեն[1]: Վ. Պոլյանիչկոյի ղեկավարած կազմկոմիտեն հոգևարքի մեջ էր: 4-րդ բանակի հրամանատար Ի. Սոկոլովը և 23-րդ դիվիզիայի հրամանատար գնդապետ Վ. Բուդեյկինը, անտեսելով ԽՍՀՄ պաշտպանության նոր մինիստր Ե. Շապոշնիկովի՝ կրակը դադարեցնելու և Շահումյանի շրջանի Վերիշեն գյուղից զորքերը հետ քաշելու մասին հրամանը, շարունակում էին կատարել Ա. Մութալիբովի և Վ. Պոլյանիչկոյի հրամանները: Օգոստոսի 23-ին ԼՂԻՄ մարզգործկոմը, բաց նամակ հղելով ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին, ՌԽՖՍՀ նախագահ Բ. Ելցինին և ԽՍՀՄ գլխավոր դատախազությանը, պահանջեց պատասխանատվության ենթարկել Լեռնային Ղարաբաղում իրագործվող հանցագործությունների պարագլուխներին, որոնք նաև պետական հեղաշրջման կողմնակիցներ էին[2]: Ի պատասխան՝ 1991 թ. օգոստոսի 29-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հռչակեց Ադրբեջանական Հանրապետության 1918-1920 թթ. անկախության վերականգնման մասին ակտը:

---

[1] *Տե՛ս* Ельцин Б. Н. *Записки президента, М.,1994, с. 76.*

[2] *Տե՛ս Ուրբաթ, 30.08.1991:*

Խորհրդարանի այդ նիստին ԼՂԻՄ-ը մասնակցություն չունեցավ: Ադրբեջանը, անկախության իր հռչակագրում Ադրբեջանական ԽՍՀ ստեղծումը համարելով ագրեսիա, անեքսիա և զավթում, անվավեր ճանաչեց նախկին բոլոր որոշումներն ու իրավական ակտերը, ներառյալ՝ Ադրբեջանի իրավական իշխանությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Դա նշանակում էր, որ Բաքուն վերջնականապես կորցրեց ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլև Նախիջևանի հանդեպ իր բոլոր իրավունքները: Ինչ վերաբերում է 1918-1920 թթ., ապա այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաև Նախիջևանը Ադրբեջանական Հանրապետության մաս չէին[3]:

Ի պատասխան այդ քայլի՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի ու Շահումյանի շրջխորհրդի միացյալ նիստը, որը և ընդունեց պատմական որոշում: Որոշման առաջին կետը մարզի ու Շահումյանի շրջանն ընդգրկող տարածքը հռչակում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Երկրորդ կետով որոշվեց աշխատավորների պատգամավորների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհուրդը և նրա գործադիր կոմիտեն համարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության և կառավարության ժամանակավոր բարձրագույն մարմին մինչև համաժողովրդական ընտրությունները և հանրապետության նոր մարմինների ձևավորումը: Ըստ երրորդ կետի՝ որոշվեց ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմին հանձնարարել, ներգրավելով լայն հասարակությանը, ձևավորել և ներկայացնել մարզային խորհրդի իշխանության ու կառավարման մարմինների կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ ժամանակավոր դրույթները: Ըստ չորրորդ կետի որոշվեց ԼՂՀ տարածքում, մինչև հանրապետության Սահմանադրության և օրենքների ընդունումը, գործում է ԽՍՀՄ օրենսդրությունը, ինչպես նաև այժմ գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին[4]:

Նույն օրը հրապարակվեց նաև ԼՂՀ-ի առաջին հռչակագիրը, որն իրավաբանորեն, դիվանագիտական ու քաղաքական հիմքերով ներկայացնում է իր ծննդի իրողությունը, նպատակները, կենսագործունեության ժողովրդավարական սկզբունքները: ԼՂԻՄ-ի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանում գործկոմի նախագահ ընտրվեց մինչ այդ նախագահի պաշտոնակատար Լեռնարդ Պետրոսյանը: Այսպիսով, կյանք մտավ Լեռնային Ղարաբաղի Հանրապե-

---

[3] *Տե՛ս* **Манасян А.** *Карабахский конфликт, ресурсы правового подхода, Е., 1998. с. 4-21.*

[4] *Տե՛ս* **Ուլուբաբյան Բ.,** *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 329:*

տությունը՝ Արցախյան աշխարհի պետական կազմավորումը, որը պետք է կատարեր իր առաջին քայլերը պատմական բարդ ու խճճված ժամանակաշրջանում:

Արցախի անկախության հռչակումը լիովին համապատասխանում էր նախկին ԽՍՀՄ սահմանադրական օրենքին, որն այդ ժամանակ դեռևս գործում էր, և որն էլ հիմք դարձավ նախկին միութենական հանրապետությունների անկախացման համար: Ըստ ԽՍՀՄ ԳԽ 1990 թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու կապակցությամբ ծագող հարցերի լուծման կարգի մասին»[5] օրենքի, որով սահմանվում էր ոչ միայն միութենական հանրապետությունների, այլև նրանց կազմի մեջ մտնող ինքնավար միավորների և համատեղ ապրող ազգերի խմբերի՝ Միության մեջ մնալու կամ միութենական հանրապետությունների հետ դուրս գալու իրավունքը, անկախություն հռչակող ինքնավար կազմավորումներ ունեցող հանրապետությունը պետք է առանձին հանրաքվե անցկացներ յուրաքանչյուրի համար:

Սակայն, ինչպես նշեցինք, ադրբեջանական ղեկավարությունը 1991 թ. օգոստոսի 28-ին անկախությունը վերականգնելուց միտումնավոր անտեսել էր Ղարաբաղը և Նախիջևանը: Լեռնային Ղարաբաղի պետության կայացումը ոչ միայն յուրաքանչյուր արցախցու, այլև ամբողջ հայության իղձն ու տենչանքն էր: Ազատ ու անկախ ապրելու իրավունքը պաշտպանելու համար ոտքի ելած արցախահայությունը պայքարի ընթացքում հանգեց տրամաբանական և օրինաչափ հետևության՝ պետականության հիմնմանը, որի հիմքը նախ և առաջ մարտունակ սեփական բանակի ստեղծումն էր[6]:

Փաստորեն, 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումն ամենավճռորոշ և գործնական քայլն էր: Ռազմաքաղաքական այդ բարդ ժամանակաշրջանում ԼՂՀ-ի հռչակումը չէր կարող անտարբեր թողնել Բաքվին:

Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության 1991 թ. սեպտեմբերի 3-ի որոշումով արցախցիների այդ քայլը որակվեց որպես դավաճանություն՝ «Ադրբեջանի ամբողջականության և անկախության դեմ»: Համապատասխան մարմիններին հանձնարարվեց միջոցներ ձեռնարկել արցախցիներին զինաթափելու, սեպտեմբերի 2-ի նստաշրջանը կազմակերպողների նկատմամբ քրեական գործ հարուցելու և նրանց պատասխանատվության ենթարկելու

---

[5] *Տե՛ս* **Դանիելյան Կ.,** *Արցախը՝ չսանձված նժույգ, Ե., 2001, էջ 148:*

[6] *Տե՛ս* **Աբրահամյան Հ.,** *Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Ե., 1997, էջ 57-58:*

համար[7]: Ի պատասխան արցախցիների դրսևորած աննկուն կամքի՝ ազերի ելուզակները զանգվածային հարձակումներ սկսեցին գործել Արցախի Շահումյանի, Հայաստանի սահմանամերձ շրջանների վրա: Ադրբեջանի ժողպատգամավոր Թոֆիկ Իսմայիլովը, սեպտեմբերի 3-ին ելույթ ունենալով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարում, զայրացած հայտարարեց, թե ադրբեջանական տարածք հանդիսացող ԼՂԻՄ-ում նոր հանրապետության ստեղծումն անօրինական է[8]:

1991 թ. սեպտեմբերին այն համոզմունքը կար, որ արդեն մոտ է Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում սեպտեմբերի 9-ին հայտարարվեց, որ շուտով կվերականգնվեն մարզային իշխանությունները, մարզի տարածքից դուրս կբերվի ադրբեջանական ՕՄՕՆ-ը, և բանակցություններ կսկսվեն Հայաստանի ու Ադրբեջանի միջև[9]: Եվ իրոք, Մ. Գորբաչովի նախագահությամբ սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Պետական խորհրդի նիստը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ում վերականգնել մարզային և տեղական իշխանությունները, մարզի տարածքից դուրս բերել բանակը և ռազմական միավորումները[10]:

Ի պատասխան՝ Ադրբեջանի ժողճակատի պարագլուխ Ա. Ալիևը հանրապետության հեռուստատեսությամբ կոչ արեց Լեռնային Ղարաբաղ ուղարկել 200-հազարանոց զինված ուժեր՝ «այնտեղ կարգուկանոն հաստատելու համար»: Նա բոլոր ադրբեջանցիներից պահանջեց զինվել և պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Հենց ժողճակատի ճնշման ներքո Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը նոյեմբերի 26-ին որոշում ընդունեց լուծարել ԼՂԻՄ-ը և Ստեփանակերտը վերանվանել Խանքենդի[11]: Սեպտեմբերի 8-ին Ադրբեջանի նախագահ ընտրված Այազ Մութալիբովը դրանով փորձում էր հիմնավորել, որ չկա Լեռնային Ղարաբաղի մարզ, հետևաբար չկա և Ղարաբաղի հիմնախնդիր: Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում Ադրբեջանի այդ որոշումը գնահատվեց որպես սադրանք հայ ժողովրդի նկատմամբ:

Ստեղծված նոր պայմաններում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման միջնորդի ու երաշխավորի դերը ստանձնեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բորիս Ելցինը և Նուրսուլթան Նազարբաևը: Նրանք, ժամանելով

---

[7] Տե՛ս Бакинский рабочий, 04.09.1991.
[8] Նույն տեղում:
[9] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 10.09.1991:
[10] Տե՛ս Правда, 17.09.1991.
[11] Տե՛ս Бакинский рабочий, 27.11.1991.

Անդրկովկաս, սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտում բանակցություններ վարեցին ԼՂԻՄ-ի ղեկավարության հետ, իսկ հաջորդ օրը Ժելեզնովոդսկում ընդունվեց հայտարարություն, որով փաստորեն Արցախի հիմնահարցը բանակցությունների միջոցով լուծելու գործընթացի հիմքը դրվեց:

Ստեփանակերտում հոկտեմբերի 28-ին գումարված արտադրական ձեռնարկությունների տնօրենների խորհրդի նիստը, քննարկելով ստեղծված տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակը, հարց բարձրացրեց՝ ստեղծելու ԼՂՀ պաշտպանության խորհուրդ և զին-ված ուժեր: Դա բխում էր արդեն Ադրբեջանում բանակ ստեղծելու և այն Լեռնային Ղարաբաղի դեմ հանելու վտանգին դիմագրավելու հրամայականից: Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի, հատկապես Ստեփանակերտի շուրջ գտնվող ադրբեջանական բոլոր բնակավայրերը, մանավանդ Շուշին, վերածվել էին ռազմական հենակետերի: Ստեփանակերտն ու մոտակա հայկական գյուղերը, 1991 թ. սեպտեմբերից սկսած, անընդհատ կրակի տակ էին: Ադրբեջանը 1991 թ. դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղը ներքաշեց պատերազմական գործողությունների մեջ՝ նպատակ ունենալով այն նվաճել և հայաթափել: Շուշիից, Կրկժանից, Ջանհաանից, Խոջալուից և Մալիբեյլուից ադրբեջանական զինված կազմավորումները տարբեր տրամաչափի հրանոթներից և այլ զինատեսակներից անընդհատ ռմբակոծում էին Ստեփանակերտը և մոտակա հայկական գյուղերը:

Առճակատման խորացմանը զուգընթաց՝ քաղաքական արմատական փոփոխություններ կատարվեցին նաև ԽՍՀՄ-ում: 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկի մոտակայքում գտնվող Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական խոշոր պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը, ստորագրեցին համաձայնագիր, որով հայտարարեցին ԽՍՀՄ-ի՝ որպես միջազգային սուբյեկտի և աշխարհաքաղաքական իրողության գոյության դադարեցման մասին[12]: Այլևս գոյություն չունեցող երկրի նախագահ Միխայիլ Գորբաչովը ստիպված էր հրաժարական տալ: Ադրբեջանը երես առ երես մնաց ազատության ուղին բռնած ու հետադարձի կամուրջները այրած Արցախի հայության հետ: Ռուս դիվանագետ Վ. Կազիմիրովը գրում է, որ իրականում Խորհրդային Միության փլուզումը իր հետ բերեց նոր բարդություններ արցախյան հակամարտությունում, քանի որ այն սկիզբ էր առել

[12] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 10.XII.1991:

միասնական պետությունում, որպես զուտ ներքին հիմնախնդիր, որը աստիճանաբար հետագայում վերածվեց միջպետական հիմնահարցի[13]:

ԼՂՀ իշխանությունները, երկրամասի պաշտպանությունը կազմակերպելուց և բնակչության անվտանգությունն ապահովելուց բացի, ունեին մեկ այլ կարևոր խնդիր՝ արագացնել հանրապետության կայացման գործընթացը: Այդ առումով կարևոր նշանակություն ունեցավ 1991 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցած ԼՂՀ ժողովրդական պատգամավորների գործադիր խորհրդի նստա-շրջանը, որը որոշում ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990 թ. ապրիլի 3-ի որոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու մասին: Այն նշանակվեց դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության օրը՝ Ադրբեջանում անցկացվելիք համանման հանրաքվեից մեկ շաբաթ շուտ: Այդ օրը արցախահայությունը պետք է համաժողովրդական քվեով հաստատեր 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակված ԼՂՀ անկախությունը: 1991 թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ անկախության հանրաքվեին ներկա լինելու նպատակով աշխարհի մի շարք երկրներից եկան 40 անկախ դիտորդներ, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը: Քվեարկության իրավունք ունեցող 132328 արցախցիներից քվեարկության ներկայացան 108 736-ը (82,2%), որոնցից 108 615-ը (99,89%) քվեարկեցին Արցախի անկա-խության օգտին[14]:

Դիտորդներն արձանագրեցին, որ ԼՂՀ-ում անկախության հանրաքվեն անցել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան, և ոչ մի խախտում չի արձանագրվել: Նրանք հատուկ դիմում հղեցին աշխարհի խորհրդարաններին, նաև Ռուսաստանի Դաշնության նախագահին, որտեղ նշվում էր, թե ադրբեջանական կողմը ամեն կերպ փորձել է խոչընդոտել հանրաքվեի անցկացումը: Միայն այդ օրը նրանց արձակած հրթիռների և արկերի պայթյունից զոհվել է 7 և վիրավորվել 11 մարդ: Անկախ դիտորդներն արձանագրեցին նաև, որ ադրբեջանական կողմը «վարում է զավթողական պատերազմ ազատության և ժողովրդավարության համար մարտնչող Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ»[15]: Ըստ նրանց՝ Ռուսաստանը պետք է հաստատի 1813 թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագիրը կատարելու պարտականությունը և լինի Արցախի ժողովրդի խաղաղ կյանքի երաշխավորը: Բացի այդ, նրանք առաջարկում էին մինչև Արցախից խորհրդային բանակի հեռանալը հայերին վերադարձնել նրա իսկ

---

[13] Տե՛ս Казимиров В. Н. *Мир Карабаху. Посредничество России в урегулировании Нагорно-Карабахского конфликта, М., 2009, с. 33.*

[14] Տե՛ս Արշակյան Ա., *Արցախյան գոյապայքար, Ե., 2004, էջ 205:*

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 205:

աջակցությամբ զավթած հայկական բնակավայրերը[16]:

Հանրաքվեն ողջունեցին Ռուսաստանից, Ուկրաինայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Բուլղարիայից, աշխարհի այլ երկրներից ժամանած բազմաթիվ դիտորդներն ու լրագրողները, ԽՍՀՄ և Ռուսաստանի Դաշնության ժողովրդական պատգամավոր «Ժողովրդական Ռուսաստան» շարժման համակարգիչ խորհրդի համանախագահ Յուրի Աֆանասևը, ԽՍՀՄ ժողպատգամավոր, գնդապետ Վլադիմիր Սիմոնովը և ուրիշներ: Նրանք ի լուր աշխարհի հայտարարեցին, որ տեսան «մարտնչելու պատրաստ արցախցիներին»[17]:

1991 թ. դեկտեմբերի 16-ին ԼՂՀ գործադիր խորհրդի գործադիր կոմիտեի անունից դիմում հղվեց ՄԱԿ-ին, ինչպես և Անկախ պետությունների համագործակցությանը (ԱՊՀ), որով խնդրվում էր ԼՂՀ-ն ճանաչել որպես անկախ պետություն, որը երաշխավորում է «Միջազգային ճանաչված բոլոր նորմերի, մարդու՝ անկախ ազգային պատկանելությունից և կրոնական համոզմունքներից, իրավունքների և ազատությունների պաշտպանումը»[18]:

Բացի այդ, ԼՂՀ-ն ճանաչում է Անկախ պետությունների համագործակցությունը և հայտարարում է՝ որպես իրավահավասար անդամ նրա մեջ մտնելու իր պատրաստակամությունը[19]:

Դեկտեմբերի 19-ին ԼՂՀ-ն դիմում հղեց Ադրբեջանի կառավարությանը՝ հաստատելով սահմանադրական և ժողովրդավարական եղանակներով աշխարհ եկած իր գոյությունը և կոչելով բարի դրացիության: Ահա այդ դիմումի վերջին առաջարկության մասը. «Մենք հայտարարում ենք մեր պատրաստակամությունը՝ բանակցությունների միջոցով և միջպետական հարաբերությունների այլ ձևերով քննության առնելու և լուծելու մեր պետությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող քաղաքական, տնտեսական և այլ հարցեր: Ներկա դիմումը հարկ է դիտել բացառապես որպես արյունահեղությանը վերջ դնելու, ինչպես նաև երկու ժողովուրդների միջև խաղաղությունն ու համագործակցությունը վերականգնելու ձգտում»[20]:

---

[16] *Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 14.12.1991:*
[17] *Տե՛ս Խորհրդային Ղարաբաղ, 18.12.1991:*
[18] *Տե՛ս Երկիր, 18.12.1991:*
[19] *Տե՛ս* **Ուլուբաբյան Բ.,** *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 334:*
[20] *Տե՛ս Նույն տեղում, էջ, 335:*

Արցախյան շարժումը դարձավ վերակառուցման և նոր քաղաքական մտածողության փորձաքարը: Այսօր աշխարհում չկան այնպիսի ուժեր, որ կարողանային Ղարաբաղը կրկին վերադարձնել օտար պետության իրավասության ներքո: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իրավամբ պատմական Արցախի հայ բնակչության ազգային-ազատագրական պայքարի զավակն է[21]*:*

АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ – РЕЗУЛЬТАТ ПЕРЕСТРОЙКИ И НОВОГО ПОЛИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ

ВАСИЛЯН С. Г.

Резюме

Недееспособность советского партийно-государственного руководства и несвоевременные решения привели к тому, что арцахскую проблему не удалось решить законным конституционным путем. В результате арцахцев вынудили выбрать „путь железа и крови”. Арцахское движение стало индикатором перестройки и нового политического мышления, однако перестройка не выдержала испытание временем. Распад СССР усугубил арцахский конфликт, поскольку арцахское движение в качестве внутренней проблемы началось в единой стране, а в дальнейшем оно переросло в межгосударственную проблему.

ARTSAKH MOVEMENT AS A RESULT OF THE RECONSTRUCTION AND A NEW POLITICAL THOUGHT

S. VASILYAN

Abstract

The incapacity of the soviet party-and-state government and delayed decisions resulted in the fact that the Artsakh problem failed to be solved in a legal constitutional way. Hence, the Artsakh people were forced to choose the “way of iron and blood”. The Artsakh movement has become the indicator and new political concept of the perestroika (reconstruction), though it did not withstand the test of time. The USSR collapse aggravated the Artsakh movement, and having been inner problem it has become the interstate one.

---

[21] *Տե՛ս* **Мартиросян Г. А.** *Горбачев и трагедия Нагорного Карабаха, Рязань, 2000, с. 21.*